



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 դեկտեմբերի 2020 թվականի N 39-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԹԻՎ 13 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 13 նիստի օրակարգը:

1. 2021 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի կամավոր խնդիրների իրականացման կարգը սահմանելու մասին
2. 2021 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. 2021 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
4. 2021 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին

5. 2021 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

Վավազանու անդամներ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

*Handwritten signature of A. Mkhitarian*

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 դեկտեմբերի 2020 թվականի N 40-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի կամավոր խնդիրները և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

*Գրիգորյան Գրիշա*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

*Կարապետյան Արտուշ*

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

*Ղազարյան Սարիկ*

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԵԱՆԻԿ

*Սարգսյան Անդրեանիկ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

*Ավ. Առյուծ*

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ







### ԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Գետամեջ համայնքի կամավոր խնդիրները, ինչպես նաև կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի (այսուհետ՝ համայնքի) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանուն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված համայնքի կամավոր խնդիրների սահմանման լիազորության իրացումը, ինչպես նաև դրա հիման վրա, համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների համար ստեղծել ինստիտուցիոնալ պայմաններ, կամավոր խնդիրներից բխող սեփական լիազորությունների իրականացման համար:

3. Սույն կարգի խնդիրներն են.

1) ըստ համայնքի առանձնահատկությունների սահմանել համայնքի կամավոր խնդիրները.

2) հաստատել կամավոր խնդիրների լուծումը ենթադրող սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգն ու պայմանները.

3) սահմանել կամավոր խնդիրների լուծմանը միտված համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընթացակարգային գործառույթները.

4) սահմանել կամավոր խնդիրների լուծման նպատակով ֆինանսավորման աղբյուրները և ֆինանսավորման ընթացակարգերը:

### II. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Համայնքի կամավոր խնդիրներն այն խնդիրներն են, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքը ուղղակիորեն պայմանավորված չէ և կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

5. Համայնքի կամավոր խնդիրների սահմանման և դրանց իրականացման նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ ապահովելով համայնքի կենսագործման համար անհրաժեշտ լրացուցից պայմաններ:

6. Համայնքի կամավոր խնդիրներն են.

1) բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.

2) արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացման աջակցումը.

3) հանրակրթական դպրոցի գործունեության աջակցումը.

4) նոր աշխատատեղերի ստեղծման նպաստումը.

5) վճարովի հասարակական աշխատանքների կազմակերպումը.



6) հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը.

7) գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանն աջակցելը.

8) ագրարային կանոնների պահպանման աշխատանքների կազմակերպումը.

9) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին (բնակիչներին) սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը.

10) պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետության կողմից հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը:

### III. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՎԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Համայնքի կամավոր խնդիրների լուծումն ապահովելու նպատակով, սույն կարգով սահմանվում են համապատասխան սեփական լիազորություններ: Այդ նպատակով սահմանվող սեփական լիազորություններն են.

1) կազմակերպում և իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.

2) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

3) նպաստում և աջակցում է համայնքի հանրակրթական դպրոց(ներ)ի գործունեության կազմակերպմանը.

4) նպաստում և պայմաններ է ստեղծում նոր աշխատատեղերի ձևավորման համար.

5) կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.

6) ստեղծում է միջհամայնքային միավորումներ, ինչպես նաև անդամակցում է համայնքների հիմնադրած միություններին.

7) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.

8) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.

9) կազմակերպում է ագրարային կանոնների պահպանման աշխատանքները.

10) կազմակերպում է համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին (բնակիչներին) սոցիալական օգնության տրամադրումը.

11) կազմակերպում և իրականացնում է պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետության կողմից հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը:

### IV. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

8. Համայնքի կամավոր խնդիրների լուծման և դրանց ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման ֆինանսավորումը իրականացվում է հետևյալ կարգով.

1) համայնքի կամավոր խնդիրների լուծումը և դրանց ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունները իրականացվում են համայնքի բյուջեի սեփական եկամուտների միջոցներով:



2) համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով կարող են նախատեսվել ֆինանսական միջոցներ, որոնք չեն կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 7%-ը:

3) համայնքի կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու համապատասխան որոշումների և (կամ) համաձայնության առկայության դեպքերում:

4) այն կամավոր խնդիրները, որոնց լուծումը չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում համայնքի ղեկավարը դրանք կարող է իրականացնել ինքնուրույն:

5) համայնքի կամավոր խնդիրների (խնդրի) լուծման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքի բնակիչները:

6) համայնքի կամավոր խնդիրների (խնդրի) լուծման ցանկացած նախաձեռնության դեպքում, համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և դրա լուծման անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթերը (առկայության դեպքում):

7) համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 8-րդ կետի 6-րդ ենթակետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին:

8) համայնքի կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում, համայնքի ղեկավարը նախաձեռնողին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները և հիմքերը:

9) համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել համայնքի ավագանու անդամներ, համայնքի աշխատակազմի ներկայացուցիչներ:

10) սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ դիմումները մշտական գործող հանձնաժողովի կողմից քննարկելուց հետո, տալիս է կամավոր խնդրի լուծման իրականացման համար եզրակացություն, նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափը և անհրաժեշտությունը:

11) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով:

12) համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում էմ բացառապես համայնքի ավագանու որոշմամբ:

## Վ. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9. Սույն կարգը վերանայվում է համայնքի ղեկավարի և (կամ) ավագանու նախաձեռնությամբ: Համայնքի ղեկավարը կարող է առաջարկություններ ներկայացնել համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը: Իսկ համայնքի ավագանին, կարող է հանդես գալ սույն կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախաձեռնությամբ, օրենքով սահմանված ընթացակարգով:

10. Սույն կարգի մեջ փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը, գործողության դադարեցումը իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ:





**ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի կողմից սոցիալական աջակցություն տրամադրվում է համայնքի բնակիչների դիմումների հիման վրա՝ համայնքի ղեկավարի որոշմամբ: Սոցիալական աջակցության տրամադրման անհրաժեշտ նախապայմաններն են.

- 1) համայնքի բնակիչ հանդիսանալը,
- 2) սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը,
- 3) համայնքապետարանում գործող՝ համայնքում սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) դրական եզրակացությունը:

2. Հրատապ լուծում պահանջող առանձին դեպքերում համայնքի ղեկավարը կարող է կայացնել սոցիալական օգնության հատկացման որոշումներ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

- 3. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է դրամական օգնության տեսքով:
- 4. Սոցիալական աջակցության տրամադրման որոշումներ կայացնելիս գործում են հետևյալ չափորոշիչները՝

- 1) զոհված, հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներ,
- 2) բազմազավակ ընտանիքներ (3 և ավելի անչափահաս երեխա ունեցող),
- 3) միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաներ ունեցող անապահով ընտանիքներ,
- 4) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և հաշմանդամ ծնողներ կամ երեխաներ ունեցող անապահով ընտանիքներ,
- 5) գործազուրկի կարգավիճակ ունեցող անապահով անձինք,
- 6) առողջական խնդիրներ ունեցող (վիրահատության կամ թանկարժեք բուժման ենթակա) անապահով անձինք,
- 7) ընտանիքի անդամի հուղարկավորության կազմակերպման համար դրամական օգնության կամ տրանսպորտի տրամադրման խնդրանքով դիմած անապահով անձինք,
- 8) սոցիալապես խոցելի խմբեր և այլ դեպքեր:

5. Սոցիալապես անապահով ընտանիքներին կամ անձանց հատկացվող սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 50 000 (հիստուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Նույն ընտանիքին կամ անձին տարվա ընթացքում սոցիալական օգնություն կարող է հատկացվել մեկ անգամ:

6. Առանձին բացառիկ դեպքերում Հանձնաժողովի առաջարկության հիման վրա համայնքի ղեկավարը կարող է կայացնել սոցիալական օգնության՝ սույն կարգով չնախատեսված եղանակով և չափով տրամադրման որոշումներ, այդ մասին հաղորդում տալով առաջիկա ավագանու նիստում:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2020թվականի N 41-Ն

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի  
18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով՝  
համայնքի ավագանին **որոշում է**.

1. Սահմանել՝

- 1) 2021 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:
- 2) 2021 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքում տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԵՆՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

Հ/Հ	Տեղական տուրքերի տեսակները	Օրենքով սահմանված դրույքաչափերը (դրամ)	Ավագանու սահմանած դրույքաչափը (դրամ)
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝		
1)	<b>հիմնական շենքերի և շինությունների համար՝</b>		
ա.	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝	15 000	15 000
2)	<b>սույն կետի առաջին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝</b>		
ա.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30 000	30 000
բ.	500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50 000	50 000
գ.	1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50 000	50 000
դ.	3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100 000	100 000
3)	<b>ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝</b>		
ա.	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	3 000	3 000
բ.	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	5 000	5 000
2.	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված		



	կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝		
1)	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝	3 000	3 000
2)	բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի առաջին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի առաջին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,		
3)	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի առաջին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.		
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝	5 000	5 000
4.	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200 000	200 000
5.	Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	60 000	60 000
6.	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	50 000	50 000
7.	համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝		



1)	<b>համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝</b>		
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	մինչև 10 001	5 000 (կիրառվել է 0,5 գործակից)
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	10 001 - 13 001	5 500 (կիրառվել է 0,5 գործակից)
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	13 001 - 20 001	7 000 (կիրառվել է 0,5 գործակից)
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	20 001 - 25 001	11 000 (կիրառվել է 0,5 գործակից)
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25 001 - 45 001	15 000 (կիրառվել է 0,5 գործակից)
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	45 001 - 101 000	30 000 (կիրառվել է 0,5 գործակից)
2)	<b>օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար</b>		
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	մինչև 10 001	5 000 (կիրառվել է 0,5 գործակից)
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	10 001 - 13 001	5 500 (կիրառվել է 0,5 գործակից)
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	13 001 - 20 001	7 000 (կիրառվել է 0,5 գործակից)
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	20 001 - 25 001	11 000 (կիրառվել է 0,5 գործակից)
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25 001 - 45 001	15 000 (կիրառվել է 0,5 գործակից)
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	45 001 - 100 001	30 000 (կիրառվել է 0,5 գործակից)
8.	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար	350	350



9.	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝		
1)	առևտրի օբյեկտների համար՝	5 000 - 50 000	30 000
2)	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	25 000 - 100 000	60 000
3)	բաղնիքների (սաունաների) համար՝	200 000 - 500 000	250 000
4)	խաղատների համար՝	500 000 - 1 000 000	700 000
5)	շահումով խաղերի համար՝	250 000 - 500 000	400 000
6)	վիճակախաղերի համար՝	100 000 - 150 000	140 000
10.	Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝		
1)	<b>հիմնական շինությունների ներսում՝</b>		
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	մինչև 5 001	2 000 (կիրառվել է 0,5 գործակից)
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	5 001 - 10 001	3 000 (կիրառվել է 0,5 գործակից)
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	10 001 - 15 001	6 000 (կիրառվել է 0,5 գործակից)
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	15 001 - 20 001	9 000 (կիրառվել է 0,5 գործակից)
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	20 001 - 30 001	11 000 (կիրառվել է 0,5 գործակից)
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	30 001 - 50 001	20 000 (կիրառվել է 0,5 գործակից)
2)	<b>ոչ հիմնական շինությունների ներսում՝</b>		
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	մինչև 1 001	500 (կիրառվել է 0,5 գործակից)
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1 001 - 2 001	1 000 (կիրառվել է 0,5 գործակից)
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2 001 - 4 001	2 000 (կիրառվել է 0,5 գործակից)
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4 001 - 8 001	4 000 (կիրառվել է 0,5 գործակից)
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	8 001 - 15 001	7 000 (կիրառվել է 0,5 գործակից)

9.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	15 001 - 25 001	12 000 (կիրառվել է 0,5 գործակից)
11.	Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝		
1)	ակոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	2 000	2 000
2)	թունդ ակոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	3 500	3 500
3)	սոցիալական գովազդի համար՝	0	0
4)	այլ արտաքին գովազդի համար՝	1 500	1 500
5)	դատարկ գովազդային վահանակների համար՝	1 500 x 25 %	375
6)	եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝	1 500 x 10 %	150
12.	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	100 000	100 000
13.	Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրովտրոուների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝	10 000	10 000
14.	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	500 000	500 000
15.	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝		
1)	3 հեկտարից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	2 500 000	2 500 000
2)	5 հեկտարից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	5 000 000	5 000 000
3)	7 հեկտարից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	7 000 000	7 000 000
4)	10 հեկտարից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար	10 000 000	10 000 000
16.	համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	50 000 - 300 000	150 000
17.	համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝		
1)	կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝	10 000 - 20 000	15 000
2)	հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝	100 000 - 300 000	200 000





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴԻՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

Հ/Հ	Տեղական վճարների տեսակները	Օրենքով սահմանված դրույքաչափերը (դրամ)	Ավագանու սահմանած դրույքաչափը (դրամ)
1.	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝		5 000
2.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝		10 000
3.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝		10 000
4.	Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝		2 000
5.	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝		2 000
6.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանվում է.		
1)	կենցաղային աղբի համար՝		
ա.	ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակիչի համար՝ ամսական	50-400	150

2)	ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝		
ա.	ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝	3 000	3 000
7.	Համայնքներում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.		
1)	առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	50-100	50
2)	արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	5-15	5
3)	կրթական, մշակութային և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	3-15	3
8.	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝	մինչև 1 000	100
9.	Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճար՝		0





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2020 թվականի N 42-Ն

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սահմանել Գետամեջ համայնքում հասցեների տրամադրման ծառայության վճար՝ 5 000 դրամ.
2. Սահմանել Գետամեջ համայնքում ինժեներական ենթակառուցվածքների մոնտաժման կամ ապամոնտաժման աշխատանքների համաձայնության տրամադրման հետ կապված ծառայության վճարների դրույքաչափերը՝ համաձայն N1 հավելվածի.
3. Սահմանել Գետամեջ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության վճար՝ համաձայն N2 հավելվածի.
4. Սահմանել Գետամեջ համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրման ծառայության վճար՝ յուրաքանչյուր հենասյան համար ամսական 100 դրամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ *ամ*

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ *Սարգսյան*

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԵԿԱՎԱՐ՝



*Մկ-Արմյ*

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ





Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության Կոտայքի  
մարզի Գետամեջ համայնքի ավագանու  
2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 42-Ն որոշման

**ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՆՔԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԿԱՄ  
ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

Հ/Հ	Վճարի տեսակը	Դրույքաչափը (ՀՀ դրամ)
1.	Մինչև 100 մետրի դեպքում՝	3 000
2.	101-ից մինչև 500 մետրի դեպքում՝	5 000
3.	501 և ավելի մետրի դեպքում՝	10 000



Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 42-Ն որոշման

**ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՐԻՄ ԳՏԱԿՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌԱՎԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

Հ/Հ	Վճարի տեսակը	Դրույքաչափը (ՀՀ դրամ)
1.	<b>Շինությունների համար՝</b>	
1)	Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	150
2)	Իրավաբանական անձանց համար՝ 25 000 դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	250
2.	<b>Հողամասերի համար՝</b>	
1)	Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	10
2)	Իրավաբանական անձանց համար՝ 25 000 դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	30





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 դեկտեմբերի 2020 թվականի N 43-Ա

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2021 թվականի վարձատրության չափը որոշել ամսական 280 000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4

Դեմ -0

Չեղնակալի -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

*Grig*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

*Art*

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

*Sarik*

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԵԱՍ

*And*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



*Armen*

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2020 թվականի N 44-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



*Handwritten signature*

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ





Հավելված  
Հանրապետության Կոտայքի մարզի Քեռամեջ  
ավազանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի  
N 44-Ա՝ որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԵՏԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

1. Աշխատակիցների քանակը՝ 9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը	
1	2	3	4	5	6	7	8	
<b>Քաղաքական պաշտոններ</b>								
1.	Համայնքի ղեկավար	-	1	280 000	-	-	280 000	
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	-	1	170 000	-	-	170 000	
<b>Համայնքային ծառայության հաստիքներ</b>								
1.	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	229 000	-	22 900	251 900	
2.	Առաջատար մասնագետ	3.1-1	1	206 000	-	20 600	226 600	
3.	Առաջատար մասնագետ	3.1-2	1	206 000	-	-	206 000	
4.	Առաջին կարգի մասնագետ	3.2-1	1	115 000	-	11 500	126 500	
<b>Տեխնիկական սպասարկման անձնակազմ</b>								
1.	Վարորդ	-	1	160 000	-	-	160 000	
2.	Գործակար	-	1	130 000	-	-	130 000	
3.	Հավաքարար	-	1	110 000	-	-	110 000	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>							<b>55 000</b>	<b>1 661 000</b>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2020 թվականի N 45-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կատարվող հնարավոր վերաբաշխումների չափաքանակը սահմանել 2021 թվականի բյուջեի ընդհանուր ծավալի 20 տոկոսի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ





Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի  
Գեղարքունիքի մարզային ավագանու 2020 թվականի  
դեկտեմբերի 17-ի N 45-Ն որոշման

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

(Խաճայքի բյուջեն սպասարկող տեղական զաննապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՎԵՏԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

(Անուն, հայրանուն, ազգանուն)

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ**

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
<b>1000</b>	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝</b>		29171.0	29171.0	0.0
<b>1100</b>	<b>1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, այդ թվում՝</b>	<b>7100</b>	13820.7	13820.7	X
<b>1110</b>	<b>1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում՝</b>	<b>7131</b>	7329.3	7329.3	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		2196.7	2196.7	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		5132.6	5132.6	X
<b>1120</b>	<b>1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝</b>	<b>7136</b>	5957.4	5957.4	X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		5957.4	5957.4	X
<b>1130</b>	<b>1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝</b>	<b>7145</b>	534.0	534.0	X
1131	Տեղական տուրքեր, այդ թվում՝	71452	534.0	534.0	X
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար, որից՝		90.0	90.0	X
1133	աա) Հիմնական շինությունների համար		90.0	90.0	X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		44.0	44.0	X
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		0.0		X
1139	զ) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		400.0	400.0	X
<b>1200</b>	<b>2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, այդ թվում՝ (տող</b>	<b>7300</b>	12643.7	12643.7	0.0
<b>1250</b>	<b>2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, որից՝</b>	<b>7331</b>	12643.7	12643.7	X
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		12643.7	12643.7	X
<b>1300</b>	<b>3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝</b>	<b>7400</b>	2706.6	2706.6	0.0
<b>1330</b>	<b>3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում՝</b>	<b>7415</b>	1102.9	1102.9	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		1102.9	1102.9	X



(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
